



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱ-
ԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Մասնագիտության կրթական
ծրագրի պարբերական
վերանայման ընթացակարգեր**

ԵՐԵՎԱՆ 2014

Մասնագիտության կրթական ծրագրի պարբերական վերանայման ընթացակարգը մշակվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրեր»-ե ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվող «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ծրագրի գործողությունների պլանի համաձայն ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից:

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

07.02.2014 թ. (արձանագրություն N° 6)

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՄԿԾ պարբերական վերանայման ընթացակարգ.....	6
ՄԿԾ պարբերական վերանայման նպատակն է`	6
ՄԿԾ պարբերական վերանայման խնդիրներն են`	6
ՄԿԾ պարբերական վերանայման օբյեկտներն են`	7
ՄԿԾ պարբերական վերանայման համար իրականացվող գնահատման ցուցիչները`	8
ՄԿԾ պարբերական վերանայման նպատակով իրականացվող գնահատման մեթոդներ`	8
2. Ծրագրի ամբողջական գնահատումը և դրա իրականացումը:	8
3. Իրավասություններ և պատասխանատվություն`	9
4. Հղման փաստաթղթեր`	9

Օգտագործված հապավումներ

ԳԽ – գիտական խորհուրդ

ՄԿԾ – Մասնագիտության կրթական ծրագիր

ՀԱԱՀ – Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ՈԻՄԿ – Ուսումնամեթոդական կենտրոն

ՈԱ – Որակի ապահովման

ԿԲՌՊՈՎԻ – կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման, ինքնավերլուծության

Ընդհանուր դրույթներ

1. Սույն ընթացակարգը՝ ՄԿԾ-ի պարբերաբար վերանայման քաղաքականություն հետ միասին ՀԱԱՀ-ում կարգավորելու է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի պատրաստման ՄԿԾ-ների պարբերական վերանայման գործընթացները:
2. Ընթացակարգը սահմանում են ՀԱԱՀ-ի պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները, այդ գործընթացներին ներկայացվող հիմնական պահանջները, հիմնական դերակատարներին և համապատասխան ժամանակացույցերը:
3. Ընթացակարգը հիմնվում է ՀԱԱՀ ԳԽ-ի կողմից հաստատված ՄԿԾ-ի պարբերաբար վերանայման քաղաքականություն վրա, ինչպես նաև ընթացակարգի իրականացման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել ՀԱԱՀ ԳԽ-ի կողմից հաստատված Կրթության որակի գնահատման ցուցիչների (ինդիկատորների) կոմպլեքսի կարգից և Կրթական ծրագրի տարեկան մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթից:
4. Վերոնշյալ փաստաթուղթը հանդիսանում են ՀԱԱՀ ՄԿԾ-ների որակի ներքին ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմները: ՀԱԱՀ բակալավրի, մագիստրոսի պատրաստման բոլոր ծրագրերը պետք է ենթարկվեն տարեկան մոնիթորինգի և պարբերական վերանայման՝ սկսած 2015-2016 ուստարուց:
5. ՄԿԾ-ի վերանայման պարբերականությունը պայմանավորված է կրթական մակարդակից, մասնագիտական ոլորտից և բնույթից:

1. ՄԿԾ պարբերական վերանայման ընթացակարգ

ՄԿԾ պարբերական վերանայման նպատակն է՝

գնահատել ՄԿԾ-ների շարունակական հիմնավորվածությունն ու արդիականությունը, ինչպես նաև մատուցման փաստացի որակը՝ ծրագրի իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով, որոշում ընդունել ծրագրի բարելավման վերաբերյալ՝ ձգտելով պատրաստել աշխատաշուկայի հարափոփոխ պահանջները բավարարող մասնագետներ:

Պարբերական վերանայումը հնարավորություն է տալիս գնահատել ծրագրի վավերականությունը ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությունը, հետևյալ տեսանկյուններից

- ՄԿԾ-ի մշակման և իրականացման թե՛ ընդհանուր (կումուլատիվ), թե՛ ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների ազդեցության,
- դասախոսական կազմի և նյութական ռեսուրսների մշտական հասանելիության,
- համապատասխան ոլորտի շրջանակներում առկա հետզոտության և փորձի, տեխնոլոգիական առաջընթացի, դասավանդման ու ուսումնառության վերջին զարգացումների,
- արտաքին հղման կետերում, օրինակ՝ ՈԱՇ-ում կատարված փոփոխությունների,
- ուսանողների պահանջների, գործատուների սպասումների և աշխատանքի տեղավորման հնարավորությունների փոփոխությունների,
- ուսանողների առաջընթացի և առաջադիմության,
- ուսանողների հետադարձ կապի:

ՄԿԾ պարբերական վերանայման խնդիրներն են՝

1. Վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջվածությունը աշխատաշուկայում՝ հաշվի առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, տեխնոլոգիական առաջընթացը և դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումը,

2. Աշխատաշուկայի հարավոփոխ պահանջներին համապատասխան ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորմանը նպաստող կրթական միջավայրի ստեղծման համար.
գնահատել ՄԿԾ-ում սահմանված ուսումնառությունից ակնկալվող վերջնարդյունքները, որքանով են բավարարում աշխատաշուկայի ժամանակակից պահանջները,
գնահատել շահակիցների՝ գործատուների և շրջանավարտների բավարարվածությունը առկա ծրագրից, բացահայտել թերացումները և բարելավել,
3. գնահատել ծրագրի վավերականության համապատասխանությունը արտաքին հղման կետերին՝ արտաքին օրենքներ և փաստաթղթեր, ինչպես նաև ներհամալսարանական փաստաթղթերի և որոշումների փոփոխությանը: Հաշվի առնել արտաքին պահանջների փոփոխությունները (կրթական չափորոշիչներ, միջազգային առարկայական կողմնորոշիչներ և այլ փաստաթղթեր) և դրանց հետ համադրել ՄԿԾ-ների փաստացի վերջնարդյունքները:
4. գնահատել ՄԿԾ-ի իրականացման որակը և ռեսուրսային ապահովվածությունը:
5. գնահատել ընթացիկ մոնիթորինգների ընթացքում ծրագրի կառուցվածքում կատարված փոփոխությունների արդյունավետությունը:
6. հաշվի առնել հավատարմագրող կամ արտաքին գնահատում իրականացնող կառույցների եզրակացությունները,
7. կատարել ծրագրի քննադատական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ և թույլ կողմերը իրականացման ընթացքում, և նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ,
8. հիմնավորել ծրագրի շարունակման, փակման, խոշորացման կամ վերանայման նպատակահարմարությունը:

ՄԿԾ պարբերական վերանայման օբյեկտներն են՝

- ՄԿԾ փաթեթը,
- ուսումնական պլանը,
- առարկայական ծրագրերը,
- դասավանդման գործընթացը,

- դասընթացներից ակնկալվող ուսումնառության արդյունքները,
- ուսանողների գնահատման մեթոդները և այլն:

ՄԿԾ պարբերական վերանայման համար իրականացվող գնահատման ցուցիչները՝

Կրթական ծրագրի գնահատումը իրականացվում է ըստ գնահատման ցուցիչների՝ համապատասխան «Կրթության որակի գնահատման ցուցիչների (ինդիկատորների) կոմպլեքսի» կարգի:

ՄԿԾ պարբերական վերանայման նպատակով իրականացվող գնահատման մեթոդներ՝

ՄԿԾ-ի բաղադրիչները գնահատվում են քանակական և որակական հետազոտության մեթոդների միջոցով, ակնկալիքների և ստացված արդյունքների համեմատական վերլուծությամբ, իրականացվում են բենչմարքինգ նմանատիպ տեղական կամ այլ երկրների ՄԿԾ-ների հետ:

Պարբերական վերանայման համար կարող են նաև հիմք ծառայել տվյալ ՄԿԾ-ի շրջանակներում նախկինում կարատված գնահատումները:

2. Ծրագրի ամբողջական գնահատումը և դրա իրականացումը:

Ծրագրի ամբողջական գնահատումը և պարբերական վերանայումը համահամալսարանական գործընթաց է, որտեղ կարող են ներգրավվել նաև արտաքին փորձագետներ:

Ծրագրի վերանայման պարբերականությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլով, պարբերականության որոշման համար հիմք կարող է հանդիսանալ նաև տվյալ մասնագիտական ոլորտի զարգացման տեմպերը և այլն:

ՀԱԱՀ-ում վերանայման գործընթացը պլանավորվում և իրականացվում են Ուսումնական գծով պրոռեկտորի և ՈԻՄԿ տնօրեն-պրոռեկտորների կողմից համապատասխան ֆակուլտետի հետ համատեղ, ԿԲՌՊՈՎԻ բաժնի աջակցությամբ:

3. Իրավասություններ և պատասխանատվություն`

Յուրաքանչյուր ՄԿԾ-ի վերանայման համար իրավասու է տվյալ ՄԿԾ պատասխանատուն և նրա թիմը, որը կազմված տվյալ ՄԿԾ-ի մասնագիտական ոլորտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից, ուսանողներից և գործատու(ներ)ից, իսկ նրանց աջակցում են ֆակուլտետային ՈԱ պատասխանատուներն ու կրթության բարելավման, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինի աշխատակիցները:

4. Հղման փաստաթղթեր`

1. Մասնագիտության կրթական ծրագրի պարբերաբար վերանայման քաղաքականություն (հաստատված է ՀՊԱՀ գիտական խորհրդի կողմից 31.08.2012 թ. (արձ. №1))
2. Կրթության որակի գնահատման ցուցիչների (ինդիկատորների) կոմպլեքսի կարգ (Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 24.05.2013 թ. (արձանագրություն №. 13))